մասով «Հովհաննես Մարտիրոսյան» անհատ ձեռնարկատիրոջը որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող մասնակից ճանաչելու մասին որոշումը կայացվել է «Գնումներ մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջների խախտմամբ, հետևաբար հիշյալ որոշումը Դատարանի վերոգրյալ պատճառաբանությունների հիմքով իրավաչափ որոշում չէ, և այն ենթակա է անվավեր ճանաչման, ուստի Դատարանը գտնում, է որ «Քյավառ Սերվիս» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ՀՀ Կոտայքի մարզի Նաիրիի տարածաշրջանի միջպետական, հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով 10.03.2023 թվականին հայտարարված թիվ «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2023/1Ս» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2023 թվականից 14.04.2023 թվականը տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացված՝ 1-ին չափաբաժնի մասով «Հովհաննես Մարտիրոսյան» անհատ ձեռնարկատիրոջը որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող մասնակից ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հիմնավոր է և ենթակա է բավարարման ամբողջությամբ:

<u>6. Դատական ծախսերը</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով հայցվորի կողմից պետական տուրքի գումարը նախապես վճարված լինելու հանգամանքը և այն, որ հայցը ենթակա է բավարարման, Դատարանը գտնում է, որ պատասխանողից հօգուտ հայցվորի պետք է բռնագանձել 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 234.5-234.12-րդ, 302-րդ, 362-րդ հոդվածների պահանջներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Քյավառ Սերվիս» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ՀՀ Կոտայքի մարզի Նաիրիի տարածաշրջանի միջպետական, հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով 10.03.2023 թվականին հայտարարված թիվ «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2023/1Ս» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2023 թվականից 14.04.2023 թվականը տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացված՝ 1-ին չափաբաժնի մասով «Հովհաննես Մարտիրոսյան» անհատ ձեռնարկատիրոջը որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող մասնակից ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել ամբողջությամբ:
2. Անվավեր ճանաչել թիվ «ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2023/1Ս» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2023 թվականից 14.04.2023 թվականը

տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացված՝ 1-ին չափաբաժնի մասով «Հովհաննես Մարտիրոսյան» անհատ ձեռնարկատիրոջը որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող մասնակից ճանաչելու մասին որոշումը:

3. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից հօգուտ «Քյավառ Սերվիս» ՍՊ ընկերության բռնագանձել 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:
4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով պարտապանի հաշվին:
5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:
6. Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ ԵՎԳԵՆԻ ՏԱՇՉՅԱՆ